

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7**

2013թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 25-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ դերակատարումը ՀՀ Գեղարքունիքի մարզում և հիմնական ձեռքբերումները:

/զեկ՝ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյան/

2.Հրանտ Հակոբյանի <<Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից>> գիրքը որպես Գավառի պետական համալսարանի ստեղծման պատմություն և հուշագրություն:

/զեկ՝ ՀՄՖ դեկան Հ.Գ.Ղաջոյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը իր զեկուցման մեջ մանրամասնորեն ներկայացրեց բոլոր այն խնդիրներն ու ձեռքբերումները, որոնք կապված են Գավառի պետական համալսարանի քսանամյա գործունեության հետ: Հիմնադրվելով 1993 թ.-ին հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի կողմից և լինելով Գեղարքունիքի տարածաշրջանի միակ պետական բուհը՝ այն իրականացրել է արդյունավետ ուսումնագիտական գործունեություն՝ պատրաստելով մասնագետներ, որոնք այսօր գործունեություն են ծավալում մարզի կենսագործունեության տարբեր ոլորտներում: Համալսարանի գերագույն նպատակը իրենց գործին լավագույնս տիրապետող մասնագետների պատրաստումն է, որոնց պահանջարկը մարզում կա: Նպատակն իրագործելու համար բուհն իրականացրել և իրականացնում է լայնածավալ բարեփոխումներ, որոնք նպաստում են ուսուցման արդյունավետության բարձրացմանը, լուծում են ուսուցման որակի հետ կապված խնդիրներ: Ուժեղ է համալսարանի կապը և հանրության և աշխատաշուկայի հետ, անմիջապես արձագանքում է հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին: Այդ հանգամանքով է պայմանավորված նոր կրթական ծրագրերի ներդրումը ուսումնական գործընթացում: Մեծ է նաև համալսարանի գիտական ներուժը: Կատարվում են գիտահետազոտական աշխատանքներ, լույս են տեսնում գիտության տարբեր ոլորտներին վերաբերող ուսումնասիրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, հոդվածներ, տեղի են ունենում գիտաժողովներ, լույս է տեսնում գիտական հոդվածների ժողովածու, որն ամփոփում է գիտաժողովի նյութերը: Հետևելով Բոլոնիայի գործընթացի

դրույթներին՝ ԳՊՀ-ն համագործակցում է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտասահմանյան մի շարք հայտնի համալսարանների հետ՝ նրանց հետ իրականացնելով մի շարք կրթական ծրագրեր:

Հոռոմանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ. Ղաջոյանը ներկայացրեց Հրանտ Հակոբյանի <<Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից>> գիրքը՝ որպես պատմություն և հուշագրություն: Ձեկուցողն ինքն էլ կանգնած լինելով համալսարանի հիմնադրման ակունքներում՝ ներկայացրեց այն դժվարությունները, որոնց միջով անցել և կայացել է համալսարանը: Գիրքն արժևորեցին և հուշեր պատմեցին համալսարանի կայացման գործում ավանդունեցող դասախոսներ Վ. Կատվալյանը, Մ.Ավագյանը, Ա.Սիմոնյանը և ուրիշներ:

Որոշեցին՝

- 1.Ռ.Հակոբյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:
2. Հետևողականորեն իրագործել ԳՊՀ զարգացման հայեցակարգով նախատեսված դրույթները:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան